ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գևորգյան.

Ի պատասխան Ձեր 22.05.2019թ. հ.01/250 գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է «Երևան» գրվածքով նստարանների և աղբամանների գնման մրցույթ, որը կայանալու է ս.թ. հունիսի 26-ին: Ելնելով «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգից, ինչպես նաև նստարանների ու աղբամանների գնման հայտի գնման ժամանակացույց-տեխնիկական բնութագրի դրույթներից՝ Երևանի քաղաքապետարանը՝ որպես պատվիրատու, համապատասխան գույքը կարող է պահանջել մատակարար ընկերությունից, վերջինիս հետ կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ շուտ, քան 20-րդ օրը: Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացվում է, որ ներկա պահին Երևանի քաղաքապետարանը չունի տեղադրման ենթակա գույք: Գույքի առկայության դեպքում հաշվի կառնվի նաև «Պ. Սևակ» համատիրության խնդրանքը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից «Պ. Սևակ» համատիրությանը հատկացվել է երկու նստարան:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ